

**5.6. 2000 թվականին բազմաբնակարան շենքերում բնակարան ստացած և հերթագրված ընտանիքների մասին**

Ըստ բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառում իրականացնող և բնակարաններ հատկացնող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2000թ. հանրապետությունում բնակեցվել է 80354 քառ. մ բնակելի մակերես, որից 47104 քառ. մ-ը կամ 58.6%-ը՝ նորակառույց բազմաբնակարան շենքերում, 33250 քառ.մ-ը կամ 41.4%-ը՝ բազմաբնակարան շենքերի ազատված բնակարաններում:

**Բազմաբնակարան շենքերում բնակեցված բնակելի մակերեսն ըստ մարզերի**

(քառ.մ)

	Ընդամենը		որից՝ նորակառույց շենքերում	
	1999	2000	1999	2000
Երևան	4747	6167	2470	355
Արագածոտն	-	19	-	-
Արարատ	82	2634	-	811
Արմավիր	238	110	18	-
Գեղարքունիք	636	335	390	-
Լոռի	4735	20179	3888	15218
Կոտայք	180	1300	-	1248
Շիրակ	12761	48284	2444	28424
Սյունիք	899	257	-	-
Վայոց Ձոր	290	21	36	-
Տավուշ	116	1048	-	1048
Ընդամենը	24684	80354	9246	47104

2000թ. բազմաբնակարան շենքերում բնակեցված բնակելի մակերեսի առավելագույն մասը բաժին է ընկնում Շիրակի մարզին՝ 60.1%, այնուհետև Լոռու մարզին՝ 25.1%, քաղաք Երևանին՝ 7.7%: Նորակառույց շենքերում բնակեցման մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի ստացել է հետևյալ պատկերը. առավելագույնը Շիրակի մարզում՝ 60.3%, այնուհետև Լոռու մարզում՝ 32.3%, Կոտայքի մարզում՝ 2.6%, Տավուշի մարզում՝ 2.2%, Արարատի մարզում՝ 1.7%, քաղաք Երևանում՝ 0.7%: Մնացած մարզերում նորակառույց բազմաբնակարան շենքերում բնակարաններ չեն բնակեցվել:


Հաշվետու տարում բազմաբնակարան շենքերում բնակարան են ստացել և բարելավել բնակարանային պայմանները 1749 ընտանիք՝ 6913 անդամներով:

**Բազմաբնակարան շենքերում բնակարան ստացած և իրենց բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների քանակն ու ընտանիքների անդամների թվաքանակն ըստ մարզերի**

	Ընդամենը, միավոր		Բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների անդամների թվաքանակը, մարդ
	01.01.2001թ.	%-ով 01.01.2000թ. հերթագրվածների քանակից	
Երևան	155	2.7	583
Արագածոտն	1	0.6	1
Արարատ	51	1.3	153
Արմավիր	2	0.2	9
Գեղարքունիք	9	0.6	37
Լոռի	431	6.4	1790
Կոտայք	46	2.8	129
Շիրակ	1023	6.0	4127
Սյունիք	7	0.1	20
Վայոց Ձոր	1	0.8	2
Տավուշ	23	1.9	62
Ընդամենը	1749	3.9	6913

Աղետի գոտու քաղաքներում բազմաբնակարան շենքերում 2000թ-ին բնակարան են ստացել 1417 ընտանիք:

**Աղետի գոտու քաղաքներում բազմաբնակարան շենքերում բնակարան ստացած ընտանիքների քանակը, %-ով ընդհանուրից**



2000թ. ընթացքում բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառման է վերցվել 2102 ընտանիք (2001թ. հունվարի 1-ի դրությամբ այդ նպատակով հաշվառված ընտանիքների ընդհանուր քանակի 5.2 %-ը):

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Հերթագրված ընտանիքների քանակը, միավոր	116097	114161	103949	102345	53575	44833	40312
Բազմաբնակարան շենքերում բնակարան ստացած ընտանիքների քանակը, միավոր	2896	2729	1260	1795	1256	552	1749
Բնակեցված բնակելի մակերեսը բազմաբնակարան շենքերում, քառ. մետր	137170	118800	51935	74909	71019	24684	80354
որից՝ նորակառույց շենքերում	110633	92800	30143	29809	27966	9246	47104

**Քաղաքային բնակավայրերում բնակարան ստացած և բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների քանակի դինամիկան 1992-2000թթ.**

	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Քաղաքներում բաշխված բնակելի մակերեսը, հազ.քառ.մետր	224.7	119.2	135.2	118.5	51.9	74.9	70.2	24.7	77.8
որից՝ նորակառույց շենքերում	208.7	99.1	108.7	92.5	30.1	29.8	28.0	9.2	46.1
Բնակարան ստացած ընտանիքներ, միավոր	4074	2609	2867	2723	1260	1795	1239	552	1688
Տոկոսով՝ հերթագրվածների քանակից	3.1	2.0	2.4	2.4	1.1	1.7	1.2	1.1	3.9

2000թ. ընթացքում տարբեր պատճառներով բնակարանային պայմանների բարելավման համար դիմած ընտանիքներից հաշվառումից դուրս է եկել 4272 ընտանիք: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ բնակարան ստանալու և բնակարանային պայմանները բարելավելու համար հանրապետությունում հաշվառման է վերցված 40312 ընտանիք:

**Հերթագրված ընտանիքների բաշխվածությունն ըստ փաստացի զբաղեցրած կացարանի տիպի**

	Ընդամենը	այդ թվում՝ բնակվում են (%-ով ընդհանուրից)			
		հանրակացարաններում	վթարային բնակելի ֆոնդում	տնակներում	այլ ժամանակավոր կամ բնակարանային նորմաներին չհամապատասխանող կացարաններում
Երևան	6160	0.5	2.2	-	97.3
Արագածոտն	161	-	6.2	6.8	87.0
Արարատ	2975	4.9	2.1	-	93.0
Արմավիր	1142	2.4	1.5	-	96.1
Գեղարքունիք	869	3.7	20.8	-	75.5
Լոռի	5311	3.4	13.6	66.4	16.6
Կոտայք	861	66.7	-	21.6	11.7
Շիրակ	15951	0.1	5.7	84.7	9.5
Սյունիք	5786	1.3	6.2	-	92.5
Վայոց Ձոր	106	11.3	1.9	-	86.8
Տավուշ	990	3.3	27.9	4.3	64.5
Ընդամենը	40312	2.8	6.6	42.8	47.8

Հերթագրված ընտանիքների քանակից 28172 ընտանիք (ընդհանուր հերթագրվածների 69.9%-ը) հերթի են կանգնած 10 և ավելի տարի:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

**Բնակարան ստացած և բնակարանային պայմանները բարելաված ընտանիքներն աղետի գոտում**

	2000թ. բնակեցված բնակելի մակերեսը, քառ.մ		Բնակարան ստացած և բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների քանակը, միավոր	Հերթագրված ընտանիքների քանակը, միավոր, առ.01.01.2001թ.
	ընդամենը	որից՝ նորակառույց շենքերում		
<b>Ընդամենն աղետի գոտում</b>	<b>69530</b>	<b>44690</b>	<b>1478</b>	<b>22409</b>
այդ թվում.				
քաղաքներում	67028	43736	1417	21700
գյուղական վայրում	2502	954	61	709
<b>Արագածոտնի</b>	<b>19</b>	<b>-</b>	<b>1</b>	<b>157</b>
ք. Ապարան	-	-	-	-
ք. Թալին	19	-	1	157
գյուղական վայրում	-	-	-	-
<b>Լոռու</b>	<b>20179</b>	<b>15218</b>	<b>431</b>	<b>5311</b>
ք. Վանաձոր	8918	5728	252	960
ք. Ալավերդի	113	-	3	880
ք. Ախթալա	-	-	-	42
ք. Շամլուղ	-	-	-	-
ք. Թումանյան	-	-	-	33
ք. Սպիտակ	4485	4485	66	1681
ք. Ստեփանավան	5005	5005	68	1403
ք. Տաշիր	110	-	2	46
գյուղական վայրում	1548	-	40	266
<b>Շիրակի</b>	<b>48284</b>	<b>28424</b>	<b>1023</b>	<b>15951</b>
ք. Գյումրի	47302	27470	1001	14506
ք. Մարալիկ	28	-	1	64
ք. Արթիկ	-	-	-	938
գյուղական վայրում	954	954	21	443
<b>Տավուշի</b>	<b>1048</b>	<b>1048</b>	<b>23</b>	<b>990</b>
ք. Իջևան	1048	1048	23	342
ք. Նոյեմբերյան	-	-	-	280
ք. Բերդ	-	-	-	-
ք. Դիլիջան	-	-	-	368
գյուղական վայրում	-	-	-	-

**ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ**

**Ս.Մնացականյան**